ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

ք.Երևան «21» մարտի 2023 թ N532-Ա

«ՏԵՍՏՍՎՅԱԶ» ՍՊԸ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՄԱՆ ՄԱՐՄՆԻՆ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ (ԵԱՏՄ) ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ (ՕԲՅԵԿՏԻ) ԵՎ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեխնիկական կանոնակարգման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 20-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի N 623-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետով, հիմք ընդունելով համապատասխանության գնահատման մարմնի նշանակման համար ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության, նշանակման ոլորտի սահմանման, ինչպես նաև նշանակման կասեցման կամ չեղյալ հայտարարման համար ստեղծված աշխատանքային խմբերի 2023 թվականի մարտի 20-ին կայացած աշխատանքային հանդիպման արձանագրությունը.

հ ր ա մ ա յ ու մ ե մ.

1. «ՏԵՍՏՍՎՅԱԶ» ՍՊԸ արտադրանքի սերտիֆիկացման մարմնին նշանակել սույն հրամանի հավելվածում նշված Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) տեխնիկական կանոնակարգով սահմանված արտադրանքի (օբյեկտի) և ցուցանիշների համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող մարմին՝ համաձայն հավատարմագրման վկայագրի (հավատարմագրման գրանցահամար՝ N 021/S-044) N 1-Բ հավելվածով ամրագրված հավատարմագրման ոլորտում ընդգրկված արտաքին տնտեսական

գործունեության միասնական ապրանքային անվանացանկի ծածկագրերի, ցուցանիշների և համապատասխան տեխնիկական կանոնակարգով սահմանված փորձարկման (այդ թվում՝ նմուշառման) մեթոդը սահմանող փաստաթղթերի նշագրերի:

2. «ՏԵՍՏՍՎՅԱԶ» ՍՊԸ արտադրանքի սերտիֆիկացման մարմնին համապատասխանության գնահատման մարմին նշանակել մինչև 2026 թվականի նոյեմբերի 29-ը, տրամադրել նշանակման վկայական՝ Ն-30 և շնորհել նույնականացնող համար՝ Ն-30 (Հ-30) 2023:

3. «ՏԵՍՏՍՎՅԱԶ» ՍՊԸ արտադրանքի սերտիֆիկացման մարմնին գրանցել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 3-ի N 801-Ա հրամանով հաստատված համապատասխանության գնահատման նշանակված մարմինների գրանցամատյանում:

4. Հանձնարարել՝ «ՏԵՍՏՍՎՅԱԶ» ՍՊԸ արտադրանքի սերտիֆիկացման մարմնին նշանակման ողջ ժամանակահատվածում ապահովել գործող պատասխանատվության ապահովագրության պայմանագրի առկայությունը:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ն. Տերյանին:

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

3/24/2023

X

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

Signed by: KEROBYAN VAHAN 1110760124

Հավելված
ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2023 թ.
Դեկտեմբեր 21-ի N 532-Ա հրամանի

ՑԱՆԿ
ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ (ԵԱՏՄ) ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻ

1. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի N 768 որոշմամբ հաստատված «Ցածր լարման սարքավորումների անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 004/2011),
2. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 18-ի N 823 որոշմամբ հաստատված «Մեքենաների և սարքավորումների անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 010/2011),
3. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի N 877 որոշմամբ հաստատված «Անվավոր տրանսպորտային միջոցների անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 018/2011),
4. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի N 879 որոշմամբ հաստատված «Տեխնիկական միջոցների էլեկտրամագնիսական համատեղելիություն» տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 020/2011),
5. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հանձնաժողովի 2012 թվականի հուլիսի 20-ի N 60 որոշմամբ հաստատված «Գյուղատնտեսական և անտառատնտեսական տրակտորների ու դրանց կցորդների անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգ (ՄՄ ՏԿ 031/2012):